

Հացածառին պտուղը։

կի համ ունի կ'ըսեն, և սովորաբար կ'եփեն ու այնպէս կ'ուտեն։ Դայի-թի կղզիներուն մէջ խիստ շատ կայ, տարին ութը ամիս պտուղ կուտայ, և այնչափ ատենի մէջ միայն իրեք հատ հացածառի պտուղները մէկ հոգւոյ մը կը բաւեն։ Ովկիանիայի բնակիչները նոյն պտղին միջուկը խմորի պէս կը շաղուեն, ամիսներով կը պահեն իրենց պաշար, ու չաւրուիր։

Վաթսուն տարի մը կայ որ Անգղիացիք աս ծառը շատ ծախքով տարին նաև Անթիլեան կղզիները տընկեցին։

Ուր որ չափազանցութիւնը կը սկսի, առաքինութիւնը հոն կը վերջանայ։

ՄԱՍԻԼԻՈՆ

ԱՌՏՆԻՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

Կաթի ու պանրի վրայ տեղեկութիւն։

ՁԻՈՒ, իշու, կովու, այծու և ոչխարի կաթը՝ պէտք եղած ատենը կրնան մէկմէկու տեղ բռնել՝ թէ սնունդ տալու և թէ դեղի համար։ Ամէն տեղ տեսնուած ու փորձուած է որ երբեմն մեր մը կաթը կը պակսի՝ կովու, այծու ու մաքիի կաթով կը սնուցանեն կաթնկեր տղան. գայլի ձագը ոչխարի կաթով կը մեծցընեն, նոյնպէս կատուի ու շան ձագերուն վրայ փորձուած է՝ որ մէկը մէկալին մօրը կաթը ծծելով կը սնանին։ Այս կաթերը հարկաւ մէկմէկէ տարբերութիւն պիտի ունենան և մէկմէկէ գերազանց պիտի ըլլան. բայց դեռ չգիտցուիր թէ աս տարբերութիւնները որչափ են։ Այծու և իշու կաթերը թէպէտ կուրծք